



# Տիկեր և Տուրետի համախտանիշ. Անհրաժեշտ փաստեր հիվանդների համար

## Ի՞նչ էլ ՏԻԿԵՐԸ

Տիկերը շարժումներ են, որոնք հիվանդը ոչ միշտ է կարողանում վերահսկել: Հաճախ առկա է շարժումը կատարելու մղում կամ պահանջ, այնուհետև շարժումից հետո՝ թեթևացում: Երբեմն շարժումները կարող են դադարեցվել կարճ ժամանակով:

Տիկերը կարող են լինել.

- հանկարծակի, արագ,
- կրկնվող և ստերեոտիպային (ամեն անգամ նույնանման),
- աննպատակ և անոթիքով,
- նրանք կարող են լինել պարզ և բարդ:

Պարզ տիկերն ի հայտ են գալիս հանկարծակի և սովորաբար տևում են շաբաթներ կամ ամիսներ: Առավել հաճախ հանդիպող պարզ շարժողական տիկերը ներառում են. աչքերի թարթոցը, հոնքերի բարձրացումը, թոթովելը, գլուխը և պարանոցը պտտելը կամ թափահարելը: Տարածված պարզ ձայնային տիկերը ներառում են. կոկորդը մաքրելը, հազը, ֆսֆսոցը և հորանջելը:

Բարդ շարժողական տիկերը ներառում են ավելի նպատակային շարժումներ, ինչպիսիք են. դեմքը ծամածռելը, կտկտացնելը, հատուկ ձևով քայլելը կամ պտտվելը, ցատկելը, ոտքով կամ բռունցքով հարվածելը: Բարդ ձայնային տիկերը ներառում են բազմաթիվ ձայներ հանելը, վանկեր, բառեր կամ արտահայտություններ կրկնելը (էխոլալիա), հազվադեպ, հասարակության մեջ արգելված բառեր կամ արտահայտություններ ասելը (կոպրոլալիա):

## Ի՞նչ է ՏՈՒՐԵՏԻ ՀԱՄԱՔՏԱՆԻՇԸ

Տուրետի համախտանիշը (ՏՀ), նաև հայտնի որպես Ժիլ դե լա Տուրետի համախտանիշ, հիվանդություն է, որը սովորաբար սկսվում է չորսից վեց տարեկան հասակում և առավել արտահայտված է լինում 10-ից 12 տարեկանում: Ըստ սահմանման, տիկերը պետք է սկսվեն 18 տարեկանից շուտ: ՏՀ-ն ավելի հաճախ է հանդիպում արական սեռի մոտ, քան իգական: ՏՀ հիվանդները ունեն շարժողական և ձայնային տիկերի համադրություն՝ և պարզ և բարդ, և պետք է տևեն մեկ տարուց ոչ պակաս: Կարող են ի հայտ գալ վարքային խնդիրներ, նեարոյալ տագնապը և օբսեսիվ-կոմպուլսիվ վարքը:

## Ի՞նչ է ԱՌԱՋԱՅՆՈՒՄ ՏԻԿԵՐԸ և ՏՀ-Ը

Տիկերի և ՏՀ-ի պատճառը հայտնի չէ: Տիկերը և ՏՀ-ը հաճախ ժառանգական են, այսինքն փոխանցվում են ընտանիքում սերնդից սերունդ:

## ԱՐԴՅՈՒՔ ԲՈՒՈՐ ՏԻԿԵՐԸ ՏՈՒՐԵՏԻ ՀԱՄԱՔՏԱՆԻՇ ԵՆ

Տիկերով ոչ բոլոր մարդիկ ունեն ՏՀ: ՏՀ-ի ախտորոշման համար պահանջվում է մեկից ավելի տիկ, ներառյալ ձայնային տիկը՝ մեկ տարուց ավելի տևողությամբ: Չնայած, որ տիկերը տարածված են՝ հինգ երեխաներից մեկը կարող է որևէ ժամանակաշրջանում տիկեր ունենալ, ՏՀ-ը շատ ավելի հազվադեպ է հանդիպում:

## ԿԱ՞ ԱՐԴՅՈՒՔ ԲՈՒԺՈՒՄ

Հաճախ տիկերի համար բուժում չի պահանջվում: Շարժողական տիկերի, ձայնային տիկերի և ՏՀ-ի բուժումը կախված է նրանից, որքանով են տիկերը ազդում հիվանդների վրա, և արդյոք նրանք ունեն սոցիալական կամ հուզական ներգործում: Եթե տիկերը չեն առաջացնում շատ մտահոգություն կամ խանգարում գործունեությանը, հիվանդը կարող է միայն լավ աջակցության, ուսուցման և հորդորի կարիք ունենալ: Հիվանդի ուսուցումը կարող է լավացնել ըմբռնումը և նվազեցնել սոցիալական ստիգման: Դրա մեջ կարող է մտնել բժիշկների, հոգեբանների և սոցիալական աշխատողների աջակցությունը: Ընտանիքի անդամները և ուսուցիչները պետք է սովորեն, որ տիկերը ակամա են, այսպիսով նրանք կարող են հասկանալ ախտորոշումը և խուսափել երեխայի ինքնազնադատականը իջեցնելուց: Հիվանդները պետք է քննարկեն բուժումը բժշկի հետ, եթե նրանց տիկերը.

- առաջացնում են զգալի անհանգստություն,
- խանգարում են առօրյա կյանքին կամ դպրոցական ուսմանը,
- բերում են սոցիալական մեկուսացմանը, ահաբեկմանը կամ դեպրեսիայի:

Բազմակողմանի վարքային միջամտություն տիկերի համար (ԲՎՍ) մեթոդը հանդիսանում է ՏՀ-ի բուժման թերապիաներից մեկը: ԲՎՍ-ն կենտրոնացած է իրազեկման ուսուցման և տիկի մղման մրցակցային պատասխանի զարգացման վրա: Եթե միայն վարքային թերապիան արդյունավետ չէ, կարող են օգնել որոշ



International Parkinson and  
Movement Disorder Society

# Տիկեր և Տուրետի համախտանիշ. Անհրաժեշտ փաստեր հիվանդների համար

Պեղամիջոցները: Դեղերը կարող են առաջացնել անցանկալի կողմնակի ազդեցություններ, այսինքն հիվանդները պետք է լինեն սերտ հաղորդակցության մեջ իրենց բժշկի հետ: Դեղերը ներառում են. կլոնիդին և գուանֆացին, կլոնազեպամ կամ հակատագնապային այլ դեղեր (հատկապես, եթե հիվանդն ունի տագնապ) և հակափսիխոտիկ դեղեր (չնայած պետք է հաշվի առնել կողմնակի ազդեցությունները): Բացի դրանից, այն հիվանդների համար, ովքեր չեն պատասխանում դեղերին, կարող է քննարկվել գլխուղեղի խորանիստ ստիմուլյացիա վիրահատությունը:

## ԻՆՉՈՒ՞ Է ՏՈՒՐԵՏԻ ՀԱՄԱԽՏԱՆԻՇԸ ՀԱՄԱՐՎՈՒՄ ՆԵՅՐՈՓՍԻԽԻԱՏՐԻԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Ներոփսիխոտիկ հիվանդությունները նյարդաբանական հիվանդություններ են, որոնք ազդում են վարքի վրա: ՏՀ-ով հիվանդների 50%-ից ավելին ունեն վարքային ախտանիշներ, ինչպիսիք են ուշադրության դեֆիցիտ/հիպերակտիվության խանգարումը (ՈՒԴՀԽ) և օբսեսիվ-կոմպուլսիվ խամախտանիշը (ՕԿՀ): Հիվանդները նաև կարող են ունենալ. դեպրեսիա, իմպուլսիվ վարք, անձի խանգարումներ, մտածված ինքնազնազան վարք և քնի խանգարումներ: Զրուցեք բժշկի հետ, քանի որ այս խանգարումների համար գոյություն ունի բուժում:

## Ի՞ՆՉ ԿԱՐՈՂ Է ԱԿՆԿԱԼԵԼ ՏԻԿԵՐՈՎ ԿԱՄ ՏՀ-ՈՎ ԱՊՐՈՂ ՀԻՎԱՆԴԸ

Տիկերը շատ հաճախ ժամանակավոր են: Տիկերը և ՏՀ-ը հակում ունեն անհայտանալու հիվանդի տարիքի հետ և շատ դեպքերում ամբողջապես անհայտանում են չափահաս տարիքում: